Տոնը նախապատրաստվում էր մի շաբաթվա պասով և սկսվում էր կիրակնամուտին, սակայն իսկական տոնական խրախճանքը տեղի էր ունենում կես գիշերից հետո, մեծ մասամբ լուսաբացից առաջ։ Ամեն տան մեջ անպատճառ պիտի եփվեր մսով կերակուր-կերեխաշ, կրեխաշ կամ կուրկուտավ ճաշ[11]։ Պարսկաստանից գաղթած գյուղերի համայնքներում՝ սովորաբար հարիսա։ Այսպիսով, այս ծիսական կերակուրների մեջ բեղմնավորվելու ընդունակ հատիկը մեռցվում էր և ուտվում։ Դա կարծես մի բոլորովին ջնջված աղոտ հիշողություն էր Ատտիսի ինքնաթլպատման, ներքինացման, որ ըստ առասպելի տեղի էր ունեցել Պեսինունտի թագավորի մոտ կատարված հարսանիքին, երբ Իo-ի հետ պսակվող Ատտիսին երևում է հանկարծ Կիբելան և նրա սիրով տարված Ատտիսը խելացնոր իր առնանդամը կտրում է և դեն շպրտում, ինքն էլ մեռնում է։ Այդպիսի ըմբռնումների հետքեր կարելի է նշմարել Զանգեզուրում Նավասարդի օրն այն սովորության մեջ, որ այստեղ աշխատում էին դեռ լույսը չբացված այցելել այն տները, որտեղ այդ տարին ննջեցյալ է եղել։ Բարեկամները նվերներ բերելով հավաքվում էին այդպիսի տները և ննջեցյալների տերերի հետ վողորմաթաս խմում։

Առավոտը վաղ տնեցտուն իրար լուսէր էին ուղարկում—մէժմաճու վրա ջուտա–ջուտա[12], խոշկաթար, միրգ, եփած հավ, կորկոտ գեղեցիկ շարած և մեջտեղն ու ափերին մոմեր վառած։ Այդ ամենը հետո միասին էին վայելում։ Հատուկ լուս էր պատրաստվում քավորի համար այն տանը, որտեղ այդ տարի նա երեխա էր խոտել։ Քավորն էլ մէժմաճին վերադարձնում էր որևէ նվերի՝ խալաթի հետ—յայլուխ, Շամախու շալ, կուլա և այլն։ Քավորն իրանից խոնշա էր ուղարկում իր այդ տարվա ամուսնացրած նորապսակներին։ Խոնշա բերողը ստանում էր նվեր։ Այս սովորությունների մեջ քավորը հանդես էր գալիս որպես ամուսնական կապեր հաստատող և մանկածնությունը խրախուսող մագիկ ուժ ունեցող անձնավորություն։

Այդ օրը տան մեծերը շնորհավորում են նաև քեխվային մի-մի խնձոր[13] մեջը մանր սպիտակ դրամ խրած, մի շիշ օղի և այլ նվերներ նվիրաբերելով։ Մելիքների օրով այդպիսի նվերներով ներկայանում էին նույնպես մելիքին և նրա ձեռքը համբուրելով շնորհավորում Նոր տարին։ Նա էլ մի եզ էր մորթել տալիս և բոլորին հյուրասիրում[14]։ Ամեն մի տան դրսում, բարձր տեղից կախում էին կարմիր կտոր. այս բանը հիշողություն էր առասպելի այն մանրամասնության, երբ թե Կիբելան տեղափոխելով իր սիրուց անձնասպան եղած Ատտիսին իր քարայրը՝ շուրջը կախել էր նրա վերքերի վրայից հանած և արյունից կարմրած կտորները։

Թե՛ հասակավորները և թե՛ մանավանդ երիտասարդներն ու երեխաները այդ օրը անպատճառ հագնում էին նոր շորեր։ Նույնիսկ անասուններին աշխատում էին Նոր տարին ուրախ հանդիպել տալ՝ գոմերը լավ մաքրում էին և գարի ցանում հարդի վրա, իսկ պոչերին կարմիր ժապավեն՝ թել էին կապում։ Այս ամենով ուրախ սկզբնավորության մագիկ զորությամբ առաջ էր բերվում

---

[11] Ցորենը թակում են սանդի մեջ, տաք ջրով լվանում, կաթսայի մեջ մեկ շերտ կուրկուտ, մեկ շերտ մատղաշ միս՝ ոչխարի, այծի կամ խոզի դարսում, խուփը լավ ծածկում և թորլեի մեջ կրակի վրա մինչև առավոտ պահում։ Ջպիտի խառնեին. շերեփ չպիտի կպչեր, երևի նրա համար, որպեսզի տարին էլ խառնաշփոթ չանցնի։

[12] Ջանապան։

[13] Բեղմնավորության նշան։

[14] Լալայեան Ե., Սիսիան, էջ 159։